Պաշտպանական որոշում

Պաշտպանական որոշման համար դատարան կարող է դիմել ընտանիքում բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձը կամ նրա համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնը: Եթե ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս կամ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձ է, ապա պաշտպանական որոշման համար դատարան կարող են դիմել նրա մերձավոր ազգականները, օրինական ներկայացուցիչը և խնամակալության ու հոգաբարձության մարմինը:

Պաշտպանական որոշմամբ կարող են կիրառվել անհետաձգելի միջամտության որոշմամբ նախատեսված սահմանափակումները, ինչպես նաև

1) ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել՝ ընտանիքում բռնության ենթարկվածի հետ կիսելու իրենց համատեղ անչափահաս կամ չափահաս անաշխատունակ երեխաների, ինչպես նաև իրենց համատեղ խնամքի տակ եղող անձանց խնամքի ծախսերը: Դատարանը կարող է ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել հոգալու ընտանիքում բռնության ենթարկվածի այլ անհրաժեշտ ծախսերը, որոնք ծագել են գործադրված բռնության պատճառով.

2) արգելել երեխաների հետ տեսակցությունները.

3) ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա դնել պարտականություն անցնելու վերականգնողական ծրագիր:

- **Հանրային պաշտպանի գրասենյակ (ՀՀ Փաստաբանների պալատ)**
  Հայաստան, 0010, Երևան, Զաքյան փող., 2 շենք,
  2-րդ հարկ, (Կենտրոն վարչ. շրջան)
  +37410600714

- **ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**:

  Սեռական բռնության դեպքերում օգտակար հեռախոսահամարներ՝
  0800 01 280, 077 99 12 80

  Ընտանեկան բռնության դեպքերում օգտակար հեռախոսահամարներ՝
  099 88 78 08, 010 54 28 28

EUROPEAN UNION FOR ARMENIA

Human Rights Defender of RA
22 մարդու իրավունքների պաշտպան

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹԵԺ ԳԾԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հրատարակության մեջ արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետների հետ:

ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ՝

UNFPA
UNDP Empowered lives. Resilient nations.
unicef

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՕԳՏԱԿԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

- **ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
  Թեժ գիծ ծառայություն՝ 114
  Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն

- *Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն*
  Վարչության պետ՝ Գեղանուշ Գյունաշյան
  Հեռ.՝ (010) 54-27-35
  Էլ.փոստ՝ geghanush.ghyunashyan@mlsa.am

- *Կանանց հիմնահարցերի բաժին*
  Վարչության պետի տեղակալ, բաժնի պետ՝ Արմենուհի Թանաշյան
  Հեռ.՝ (010) 56-53-21
  Էլ. փոստ՝ armine.tanashyan@mlsa.am

- *Երեխաների հիմնահարցերի բաժին*
  Բաժնի պետ՝ Լենա Հայրապետյան
  Հեռ.՝ (010) 56-53-21
  Էլ. փոստ՝ lena.hayrapetyan@mlsa.am

- **ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչություն**
  Տարածքային ստորաբաժանումներ

  Թեժ գիծ ծառայություն՝
  (+374) 10 54-69-14
  (+374) 10 54-69-12

- **ՀՀ առողջապահության նախարարություն**
  Թեժ գիծ ծառայություն՝ 8003



Ք. Երևան, Պուշկին 56Ա
Հեռ.՝ +374 10 53 76 51
ombuds@ombuds.am

Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ
Կենտրոնական հրապարակ 4
Հեռ.՝ 374 264 30116

Շիրակի մարզ, ք. Գյումրի
Միհեր Մկրտչյան 44/46
Հեռ.՝ 374 312 41981

Սյունիքի մարզ, ք. Կապան
Մելիք Սրբեփանյան 6
Հեռ.՝ 374 285 20116

Թեժ-գիծ ծառայության հիմնական նպատակներն են՝

- Լսել՝ լսել ապրումակցմամբ ու առանց քննադատության:
- Անդրադառնալ բռնության ենթարկված անձի առաջնային կարիքներին և մտահոգություններին՝ հուզական, ֆիզիկական, սոցիալական, կենցաղային, օրինակ, նախորդ գիշեր հնարավոր է տուժողը գիշերել է դրսում, սոված է և այլն:
- Վստահություն. թեժ-գիծ ծառայության հիմնական նպատակներից է նաև բռնության ենթարկված անձին վստահեցնել, որ ինքը **մեղավոր չէ** կատարված բռնության համար:
- Քննարկել և աջակցել անվտանգության պլանի կազմման անհրաժեշտությունը:
- Աջակցության կազմակերպում ունեցած ռեսուրսների սահմաններում կամ ուղղորդում համապատասխան կառույցներ:

Ռիսկի գնահատման մի քանի առանձնահատկություններ հեռախոսային խորհրդատվության ընթացքում

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Բռնության ենթարկված անձի գնահատականը իրեն սպառնացող ռիսկի կամ վտանգի մակարդակի մասին, որպես կանոն, շատ ճշգրիտ է: Եթե բռնության ենթարկված անձը վախենում է իր կյանքի համար կամ ասում է, որ, օրինակ, «Նա ինձ կսպանի», ապա դրան պետք է լուրջ վերաբերվել:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Անձը կարող է դիմել ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության հետևյալ միջոցների կիրառության համար՝

- նախազգուշացման (ոստիկանություն),
- անհետաձգելի միջամտության որոշման (ոստիկանություն),
- պաշտպանական որոշման (դատարան):

Նախազգուշացումը

Կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն:

Անհետաձգելի միջամտության որոշումը

Եթե առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում: Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ:

Ստորև ներկայացվում են թեժ- գիծ հեռախոսազանգին պատասխանելու ընթացքում մի շարք կարևոր կետեր.

- Հեռախոսային խորհրդատվության պարագայում բացակայում է տեսողական կոնտակտը, հետևաբար շատ կարևոր է հեռախոսին պատասխանողի ձայնը, տոնայնությունը, ինչպես նաև հաճախակի. «Այո՛, Լսում եմ Ձեզ» արտահայտությունների կրկնությունը, որպեսզի զանգահարողը վստահ լինի, որ իրեն լսում են:
- Կարևորե՛ք զանգահարողի (տուժողի) հայտնած տեղեկությունները և մի՛ քննադատեք: Օրինակ՝ մի պնդեք, թե զանգահարողը որևէ գործողություն չի արել կամ թերի է արել:
- Թողե՛ք զանգահարողը ինքն ավարտի իր նախադասությունները, մի՛ ձևակերպեք մտքերը նրա փոխարեն, մի՛ ընդհատեք:
- Տվե՛ք բաց հարցեր, որոնք չեն ենթադրում այո կամ ոչ պատասխան:
- Վերաձևակերպե՛ք զանգահարողի հիմնական մտքերը, հասկանալու համար, արդյոք ճիշտ եք ընկալում նրա ասածները:
- Տվեք պարզաբանող հարցեր, եթե չեք հասկանում զանգահարողի ասածները:
- Ամփոփե՛ք հեռախոսազանգի ժամանակ հնչած կարևոր մտքերը և բացատրե՛ք հետագա անելիքները:

Ստորև առաջարկվում է հիմնական հարցերի շարք, որոնց պատասխաններից կախված, կարելի է գնահատել ռիսկի մակարդակը:

1. Արդյո՞ք բռնությունը ավելի հաճախակի է դարձել կամ ավելի դաժան ու վատ դրսևորումներ է ստացել վերջին 6 ամիսների ընթացքում:
2. Բռնություն գործադրած անձն օգտագործո՞ւմ է թմրանյութ կամ չարաշահու՞մ է ալկոհոլային խմիչքներ:
3. Նա երբևէ օգտագործե՞լ է զենք կամ վախեցրե՞լ է, որ զենքով կվնասի Ձեզ:
4. Նա երբևէ փորձե՞լ է Ձեզ խեղդել կամ այլ ֆիզիկական վնաս հասցնել:
5. Հավատու՞մ եք, որ նա կարող է Ձեզ սպանել:
6. Երբևէ ծեծե՞լ է Ձեզ, երբ հղի եք եղել:
7. Բռնություն կիրառող անձը հետապնդու՞մ է, հետևու՞մ է, վերահսկու՞մ է Ձեզ տարբեր միջոցներով. հեռախոսի զանգերի վերահսկում, ձայնագրում, հետապնդում աշխատանքի գնալիս և այլ միջոցներ:**պանի», ապա դրան պետք է լուրջ վերաբերվել:**

Անհետաձգելի միջամտության որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները.

1) հարկադրել բռնություն գործադրած անձին հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից և արգելել այդտեղ նրա վերադարձը,

2) արգելել բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր,

Հաճախ տրվող հիմնական հարցեր, որոնք կարևոր կլինեն թեժ-գծի հեռախոսազրույցի ընթացքում.

- Ինչպե՞ս կարող ենք Ձեզ օգնել կամ աջակցել:
- Կուզենա՞ք այլ բան ավելացնել կամ ավելին պատմել կատարվածի մասին:
- Ինչպե՞ս եք Ձեզ զգում:
- Ճի՞շտ եմ հասկանում, որ անհանգստություն եք զգում Ձեր երեխաների համար կամ գնալու տեղ չունեք:

Նախընտրելի արտահայտություններ.

- Դա Ձեր մեղավորությունը չէ:
- Դուք մեղավոր չեք բռնության ենթարկվելու համար:
- Ձեզ հնարավոր է օգնություն տրամադրել: Մենք կարող ենք օգնել այդ հարցում (ասում ենք միայն այն պարագայում, երբ **վստահ** ենք, որ կարող ենք կազմակերպել աջակցության հարցը):
- Դուք մենակ չեք.ցավոք, շատ կանայք են ամբողջ աշխարհում անցնում նման փորձության միջով:

  Ամեն ոք արժանի է զգալ անվտանգ իր տանը:
- Նորմալ է, որ ցանկանում եք խոսել կատարվածի մասին:

Եթե վերը նշված պնդումների կեսից ավելին բնորոշ են տվյալ դեպքին, ապա բռնության ենթարկված անձի համար ռիսկը բարձր է:

Եթե կնոջ համար անվտանգ չէ տուն վերադառնալը, ուղղորդեք վերջինիս ապաստարան կամ փորձեք գտնել այնպիսի ապահով տարածք, որտեղ նա կարող է պատսպարվել, իսկ բռնություն կիրառող անձը չգիտի այդ վայրի մասին:

Արդյունավետ անվտանգության պլան մշակելու համար անհրաժեշտ է հասկանալ այն ռիսկային գործոնները, որոնք սրում են բռնությունը և հանգեցնում դրա կրկնությանը:

3) արգելել բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին, որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին,

4) մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալն ի պահ վերցնել բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը,

5) արգելել բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկվածի հետ: